

քան Պէսկին, Վէննայուն և Բեգրապուրկին . և 'ի վերայ այս ամենայնի մեռելոց թիւն համեմատութեամբ նուազ է լոնտրա քան թէ այս մայրաքաղաքաց մէջ :

Յամին 1862 Բարիզ ծներ են 26505 մանչ և 25807 աղջիկ ընդ ամենն 52313 տղայք : Մեռելոց թիւն էր 42183 , որով ծնունդք կ'առաւելուն քան մեռեալները 10127 թուով : Ամուսնութեց թիւն էր 15916 : Բարիզու քսան թաղերուն (Arrondissements) բնակչաց թիւն էր ըստ վերջին աշխարհամարին 1 միլիոն 696141 հոգիք :

Մէքսիկոյի Գոնգոնիոյ միջատը .

Մէքսիկոյի Վէրաքրուզ քաղքին շրջակայքը միջատ մը կայ որ սաստիկ լոյս մը կ'արձրկէ , Սպանիացիք Գոֆֆֆօյ (Pyrophorus clarus) կը կոչեն : Այս միջատը Մէքսիկոյի կանայք ընտանի կենդանոյ մը պէս կը պահեն : Որսալու համար վառած ածուխի կտոր մը կը գործածեն , գաւազանի մը ծայրը հաստատած օգու մէջ խաղցնելով : Գոնգոնիոն ինչպէս միջատաց շատը խիստ սրատես է . հեռուանց փափրով առարկայն տեսնելով իրեն նախանձորդ մը կը կարծէ , ու սրաթով ընթացքով մը վրան կը յարձկի . բայց փորձանքի կու գայ կը բռնուի , ինչպէս սովորաբար կ'ըլլայ անոնց որ կիրքէ մը բռնուած են . ինքը իր ազատութիւնը կը կորսնցնէ՝ ուրիշ որս ըլլալով : Վէրաքրուզի վաճառանոցը կը ծախուին՝ տասուեր

կուքը երկու ռիալ . Վէրաքրուզի տիկնայք զատոնք գնելով գեղեցիկ վանդակներու մէջ կը պահեն , շաքարի եղէգով կը սնուցանեն , և օրը երկու անգամ ջրով կը թրջեն : Այս կերպ բազմաթիւ անհրաժեշտ պէտք ունի միջատս . վասն զի այն առատ ցօղին տեղ կը բռնէ՝ որ ազատ եղած ժամանակը կը վայելէր , որ և հասարակածին տակը շատ առատ է :

Գիշերը վանդակներէն հանելով իրենց զարդարանքի առարկայ մը կ'ընեն . մերթ գնդասեղի մը ծայրը անցուցած՝ առանց փրստելու , և երբեմն , որ և գեղեցկագոյն տեսարան մը կ'ըլլայ , ծաղիկայ պսակներու մէջ խառնուած՝ գլխու զարմանալի զարդ մը կ'ըլլայ՝ գոհարներու կերպ կերպ անդրադարձութեամբ : Այս կերպով է որ Մէքսիկոյի տիկնայք կրցեր են ամենագեղեցիկ զարդարանք մը ընել այն միջատը՝ որ բնութիւնը առատապէս իրենց շնորհեր է :

Լրագիր մը Գաղղիոյ Ճեմարանին անձանց տարիքին հաշիւը այսպէս կու տայ .

Վիեննէ՝ 87 տարուան . Սէկիւր՝ 83 . Պարանթ՝ 82 . Տիւփէն՝ 80 . Լըպրէօն՝ 79 . Կիզոյ՝ 77 . Լամարթին՝ 76 . Տը Պրոկլի՝ 74 . Վիլլըմէն՝ 74 . Պէռիէ՝ 74 . Բոնժէրվիլ՝ 72 . Գուզէն՝ 72 . Բաթէն՝ 71 . Ֆլուրան՝ 70 . Միլնէ՝ 68 . Թիէրա՝ 67 . Ռէմիւզա՝ 67 . և այլն :

Այս հաշուէս կը տեսնուի որ Գաղղիոյ Ճեմարանաց պատանեկութեան հասակը 50 տարուան կը սկսի . երիտասարդութիւնին՝ մինչև վաթսուներէն անգին կը ձգի . կատարեալ հասակը 70 տարուան է . և եթէ մարդկային կենաց միջին սահմանն է 33 տարին , հրաշալի անձի մը կենաց միջին սահմանը 63 տարին է :